ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**

**Հաշվետվություն թիվ 114, 21.03.2016թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,277,501 հատ, | 40,000 հատ | 240.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 21.03.16 |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 21.03.16 |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 21.03.16 |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 21.03.16 |
| **Բագրատ Ճզմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 21.03.16 |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 21.03.16 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 21.03.16 |

21 մարտի 2016թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Շենգավիթ-1 մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2016 թվականի մարտի 16-ի թիվ 05/02Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102 - 05/02Լ
Դաս: ՀՊ
«16» մարտի 2016թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՇԵՆԳԱՎԻԹ-1 ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ժը) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի ի) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բանկի Շենգավիթ-1 մասնաճյուղն ի սկզբանե ստեղծվել է Բանկի և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի միջև ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձանցից հարկերի, մաքսատուրքերի, մաքսավճարների, հաստատագրված վճարների հավաքագրման և բյուջե փոխանցման ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրի, ինչպես նաև տարածքային ցանցի և մանրածախ բանկային ծառայությունների մատուցման ընդլայնման նպատակով, սակայն 2015 թվականից սկսած արձանագրվել է գործարքների քանակի և ծավալի զգալի անկում (ներկայումս միջին օրական 80 հատ)՝ պայմանավորված ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծման նվազմամբ, Բանկի խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Ա.Օսիպյանին ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Շենգավիթ-1 մասնաճյուղի գործունեության դադարեցման հետ կապված գործընթացը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Շենգավիթ-1 մասնաճյուղի գործունեությունը դադարեցնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի գործունեության դադարեցման վերաբերյալ որոշման ընդունման հաջորդ օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի ղեկավար՝ Մ.Ուզունյան